ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

ԴՄ ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

Սույն Վարքականոնն ընդունում, փոփոխում, լրացնում եւ հաստատում է Ինքնակարգավորման նախաձեռնության (ԻՆ) Դիտորդ մարմինը (ԴՄ)՝ անդամների կեսից ավելիի կողմ քվեարկությամբ: Այն ուժի մեջ է մտնում ԴՄ կողմից ընդունման պահից: Վարքականոնը վավերացվում եւ կարող է փոփոխության ենթարկվել ԻՆ հերթական համաժողովում, մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

1. ԴՄ անդամների ներքին հարաբերությունները

1.1. ԴՄ անդամներն իրար հետ հաստատում են հարգալից, մասնագիտական, աշխատանքային հարաբերություններ՝ հանուն ինքնակարգավորման համակարգի այս կարեւոր մարմնի ներսում գործող մեխանիզմների կատարելագործման եւ ավանդաբար ձեւավորված արժեքների պահպանման:

1.2. ԴՄ անդամին անխուսափելիորեն վերաբերում են Լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի բոլոր դրույթները:

1.3. ԴՄ անդամների միջեւ տարաձայնությունների կամ թյուրընկալումների դեպքում այդ անդամները նախ փորձում են միմյանց հետ կարգավորել ծագած խնդիրը՝ առանց ԴՄ, ԻՆ մյուս անդամների եւ հանրության ուշադրությունն այդ հանգամանքի վրա բեւեռելու: Եթե չի ստացվում համաձայնության հասնել, այդ անդամները դիմում են իրենց գործընկերների՝ ԴՄ մյուս անդամների օգնությանը, ներառյալ՝ փակ ժողով գումարելու առաջարկով: Եթե փակ ժողովում նույնպես չի ստացվում համաձայնության հասնել, ԴՄ-ն, հաշվի առնելով նախադեպային որոշումները կամ միջազգային լավագույն փորձը, անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է որոշում, որը շահագրգիռ կողմերից մեկի նախաձեռնությամբ կարող է բողոքարկվել ԻՆ հերթական համաժողովում: Համապատասխան որոշումն ընդունվում է մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Սկզբունքային հակասություններ ունեցող անդամներն այս փուլում կարող են վիճահարույց խնդիրն իրենց նախաձեռնությամբ հանրայնացնել: ԴՄ-ն պետք է պատրաստ լինի պատասխանելու տվյալ խնդրի վերաբերյալ մեդիայի հարցերին: Համաժողովը պարտավոր է վեճի վերաբերյալ վերջնական որոշում կայացնել: Համաժողովի որոշումից հետո Դիտորդ մարմինը տվյալ խնդրի առնչությամբ փոփոխություն կամ լրացում է կատարում սույն Վարքականոնում:

1.4. ԴՄ որեւէ անդամի՝ սույն Վարքականոնին անհարիր վարքի դեպքում ԴՄ մեկ այլ անդամ կարող է ԴՄ-ին առաջարկել քննարկել տվյալ անդամի անդամակցությունը սառեցնելու հարցը: ԴՄ-ն անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կարող է քննության առնել/չառնել այդ հարցը, կայացնել որոշում, որը պարտադիր է կատարման՝ մինչեւ ԻՆ համաժողովի վերջնական որոշումը: Եթե ԴՄ-ն որոշում է սառեցնել իր անդամներից մեկի անդամակցությունը, ապա այդ մասին տեղեկացնում է տվյալ անդամին, ԻՆ բոլոր անդամներին՝ էլ. նամակով, եւ խնդիրը ներառում հերթական ընդհանուր ժողովի օրակարգում: Այս փուլում խնդիրը կարող է հանրայնացվել, այդ թվում մեդիա տարածքում, եւ

ԴՄ-ն պետք է պատրաստ լինի պատասխանելու մեդիայի ընթացիկ հարցերին։ ԻՆ համաժողովը պարտավոր է խնդրի վերաբերյալ վերջնական որոշում կայացնել մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ։

1.5. Դիտորդ մարմնի անդամը կարող է չմասնակցել ԴՄ նիստին, եթե համարում է, որ հանգամանքների բերումով չի կարող անաչառ լինել քննարկվող խնդրի վերաբերյալ, կամ իր մասնակցությունը կարող է հանգեցնել շահերի բախման, եւ այդ մասին տեղեկացնում է ԴՄ-ին։ Այսուամենայնիվ, ԴՄ-ն նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ որոշում է տվյալ անդամի՝ նիստին մասնակցելու/չմասնակցելու խնդիրը, նաեւ՝ ժամանակավորապես ներկա գտնվելու եւ գործընկերների հարցերին պատասխանելու նպատակով։

2. ԴՄ անդամների հարաբերությունները մեդիայի հետ

2.1. ԴՄ անդամը պետք է գիտակցի, որ մեդիա տարածքում ինքը նույնացվում է Դիտորդ մարմնի հետ, ուստի ավանդական ու սոցիալական մեդիաներում եւ ընդհանրապես մեդիայի հետ հարաբերություններում պետք է լինի կոռեկտ եւ պահպանի սույն Վարքականոնի, ինչպես նաեւ Լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի բոլոր պահանջները։

2.2. ԴՄ անդամը կարող է ԴՄ-ին գրավոր առաջարկել՝ քննության առնել իրեն առնչվող որեւէ մեդիա հրապարակում, եթե նա տվյալ մեդիա կառույցի հետ արդեն իսկ քննարկել է իր տեսակետից վիճելի խնդիրը, սակայն փոխադարձ համաձայնություն ձեռք չի բերվել։ Եթե ԴՄ անդամի կարծիքով վիճելի բովանդակությունը հրապարակել է Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ մեդիա կառույցը, ԴՄ-ն կարող է իր նիստում խնդիրը քննարկելու արդյունքում ստանձնել միջնորդի/հաշտարարի դեր՝ կազմակերպելով ԴՄ տվյալ անդամի եւ տվյալ մեդիա կառույցի հանդիպումը։ Այդ հանդիպմանը ներկա են լինում տվյալ անդամը, տվյալ մեդիա կառույցի լիազոր ներկայացուցիչը եւ ԴՄ առնվազն 3 անդամներ, որոնք պարտավոր են պահպանել անկողմնակալության սկզբունքը։ Հաջողության հասնելու/չհասնելու դեպքում ԴՄ-ն կարող է հանդես գալ հայտարարությամբ կամ փորձագիտական կարծիքով։

2.3. ԴՄ անդամը սոցիալական մեդիայում պետք է առավել ուշադիր եւ պատասխանատու լինի իր մասնագիտական հարցերի վերաբերյալ արտահայտվելիս, այլոց գրառումները վերատարածելիս հատկապես բծախնդիր պետք է լինի իր էջում կամ իր գրառման տակ օգտատերերի արձագանքները վերահսկելու հարցում՝ ատելության խոսքը, ռասայական, սեռական, կրոնական, քաղաքական կամ այլ հիմքով խտրականության դրսեւորումները ժամանակին հեռացնելու նպատակով։

3. ԴՄ անդամների հարաբերությունները հանրության հետ

3.1. ԴՄ անդամը հանրության հետ հարաբերություններում առաջնորդվում է ինքնակարգավորման սկզբունքները ներկայացնելու, բացատրելու եւ մեդիագրագիտություն տարածելու գաղափարով, խրախուսում է ԴՄ համացանցային ռեսուրսների կիրառումը, նպաստում է ինքնակարգավորմանն առնչվող գրականության թարգմանությանը, տեղայնացմանը, հրապարակմանը, տարածմանը։

3.2. ԴՄ անունից կարող են հանրությանը պաշտոնապես ներկայանալ, հայտարարություն տարածել միայն ԴՄ պարզ մեծամասնության ձայներով այդ լիազորությունները ստացած անդամները եւ ԴՄ նախագահը։

3.3. ԴՄ անդամը հանրությանը եւ մեդիա կառույցներին բացատրում է մեդիա կառույցների հետ ծագող խնդիրները ոչ դատական կարգով լուծելու հնարավորությունների առավելությունները։

3.4. Հանրության եւ մեդիայի հետ հարաբերություններում ԴՄ անդամը պետք է հստակեցնի իր կարգավիճակը. ինքը հանդես է գալիս որպես ԴՄ անդա՞մ, թե՞ որպես ոլորտային մասնագետ՝ իրավաբան, ռեժիսոր, ակտիվիստ, լրագրող, մենեջեր, արտիստ, հանրային կամ քաղաքական գործիչ եւ այլն։

3.5. ԴՄ անդամը կարող է ազատորեն անդամակցել որեւէ կուսակցության կամ քաղաքական ուժի, սակայն որեւէ կուսակցության կամ քաղաքական ուժի ղեկավար մարմնի անդամ դառնալու եւ գործադիր, օրենսդիր, դատական իշխանությունների մաս կազմելու դեպքում ավտոմատ կերպով դադարեցվում է նրա անդամակցումը Դիտորդ մարմնին։ ԴՄ նախագահն այս իրողության մասին ծանուցում է ԴՄ անդամներին։

3.6. ԴՄ այն անդամը, որը որոշել է համապետական կամ ՏԻՄ ընտրությունների նախընտրական շրջանում անդամակցել որեւէ քաղաքական կառույցի կամ ներգրավվել որեւէ ուժի քարոզարշավի, պետք է այդ մասին նախապես ծանուցի Դիտորդ մարմնին, որն ունի պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում տվյալ անդամի (անդամների) գործունեությունը սառեցնելու իրավասություն։ ԴՄ-ն այս առնչությամբ իր նիստում որոշում է կայացնում ձայների պարզ մեծամասնությամբ եւ հրապարակում է իր որոշումը։

3.6.1. ԴՄ անդամի գործունեության սառեցման ժամանակահատվածը հստակ սահմանվում է ԴՄ նիստում։ Այդ ժամանակահատվածում տվյալ անդամի պարտականությունները եւ լիազորությունները ժամանակավորապես կասեցվում են, նրա ընթացիկ գործառույթները վերաբաշխվում են ԴՄ մյուս անդամների միջեւ։ Տվյալ անդամը չի կարող այդ ընթացքում մասնակցել ԴՄ նիստերին, ԴՄ փաստաթղթերի մշակմանը, ԴՄ սոցցանցային եւ էլ.փոստային շփումներին, ԴՄ հանրային միջոցառումներին եւ իրազեկման հանդիպումներին, չի կարող հատուկ կարծիք հայտնել ԴՄ որեւէ որոշման, եզրակացության, փորձագիտական կարծիքի կամ հայտարարության առնչությամբ, չի կարող որեւէ կերպ հանդես գալ որպես ԴՄ անդամ։

3.6.2. Համապետական կամ ՏԻՄ ընտրությունների քարոզարշավին ներգրավված ԴՄ այն անդամը, որի գործունեությունը սառեցվել է, պաշտոնական քարոզարշավի ընթացքում պետք է հստակորեն սահմանազատի իր՝ տվյալ պահի քաղաքական ակտիվությունը ԴՄ անդամի գործունեությունից։ Պաշտոնական քարոզարշավի ավարտից հետո ԴՄ տվյալ անդամը դիմում է ԴՄ-ին՝ առաջարկելով առաջիկա նիստում քննարկել ապասառեցման խնդիրը։ ԴՄ-ն այս առնչությամբ իր նիստում որոշում է կայացնում ձայների պարզ մեծամասնությամբ եւ հրապարակում է իր որոշումը։

3.6.3. Եթե համապետական կամ ՏԻՄ ընտրությունների քարոզարշավին ներգրավված ԴՄ անդամը քարոզարշավի ընթացքում թույլ է տվել ԴՄ անդամի վարքականոնի խախտումներ, ԴՄ-ն կարող է

ա. մերժել ապասառեցման առաջարկը,

բ. տվյալ անդամի լիազորությունները վերականգնել որոշակի պայմաններով,

գ. քննել այս իրողությունը հանրայնացնելու/չհանրայնացնելու հանգամանքը։

ԴՄ-ն այս գործընթացը փաստաթղթավորում է եւ զեկուցում ԻՆ տարեկան ժողովին։

3.6.4. Համապետական կամ ՏԻՄ ընտրությունների նախընտրական շրջանի սահմանափակումներին վերաբերող՝ 3.5. եւ 3.6. հոդվածներում նկարագրված գործընթացները վերաբերում են նաեւ ԴՄ աշխատակազմի անդամին։

4. ԴՄ անդամների հարաբերությունները հանրային կառույցների հետ

4.1. ԴՄ անդամը օրենսդիր եւ գործադիր իշխանությունների հետ գործակցում է Հայաստանում մեդիա ինքնակարգավորման առավել արդյունավետ մեխանիզմներ ներդնելու համար։ Այս առումով ԴՄ կարեւորագույն խնդիրներից մեկը հայեցակարգային փաստաթղթերի կազմումն է, մշակումը, իրավական փաթեթավորումը եւ կիրառումը։

4.2. Հանրային կառույցների, այդ թվում ազգային կարգավորող մարմնի (ՀՌՀ-ի) հետ հարաբերություններում եւ միասնական ժողովներում, խորհրդակցություններում ԴՄ անդամները պետք է պահպանեն ինքնակարգավորման ինստիտուցիոնալ զարգացման շահերը։

4.3. ԴՄ անունից կարող են պաշտոնապես ներկայանալ, հանդիպումներ, քննարկումներ ծավալել, հայտարարություն տարածել, փաստաթուղթ ստորագրել միայն ԴՄ պարզ մեծամասնության ձայներով այդ լիազորությունները ստացած անդամները եւ ԴՄ նախագահը։

5. ԴՄ անդամների հարաբերությունները միջազգային կառույցների հետ

5.1. ԴՄ անունից միջազգային կառույցներին պաշտոնապես կարող են ներկայանալ, հայտարարություն տարածել, փաստաթուղթ ստորագրել, քվեարկել միայն ԴՄ նախագահը կամ անդամների պարզ մեծամասնության ձայներով այդ լիազորությունները ստացած անձը։

5.2. Միջազգային հարթակներում եւ ինքնակարգավորման միջազգային միավորումներում Հայաստանի լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության տեսակետը ներկայացնող ԴՄ անդամը պետք է Դիտորդ մարմնի մյուս անդամների հետ նախապես քննարկի եւ համաձայնեցնի դիրքորոշման սկզբունքները, միջազգային հանդիպումներից ու քննարկումներից հետո գործընկերներին հակիրճ ներկայացնի դրանցում տեղ գտած կարեւոր իրողությունները։

Սույն Վարքականոնն ընդունվել է Լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2024թ. ապրիլի 29-ին կայացած նիստում եւ հաստատվել է Ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2026 թվականի հունիսի 27-ին։